

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

«ԲԻԶՆԵՍ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԵՐԱԶՈՒՄ ԵՄ ՎՐԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԾԵԼ ՏԻՊԻԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՍԱՐԱՎՈՒԹՅԱՆ» ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐԳ ԲԱՐԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄՏԱԳԻՐ ԵՒ ՀԵՌԱՆԱԼ



Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին պատրաստվում է մինչև Նոր տարի հեռանալ քաղաքականությունից և անցնել ոչ կառավարական հատված: Այս մասին EVObserver լրատվական կայքին տված հարցազրույցում հայտարարեց ինքը՝ Վրաստանի կառավարության ղեկավարը:

Կայսի և Ասիայի միջև կամուրջ: «Դա իմ երազանքն է: Իմ սրտի խորքում հավատում եմ, որ նման հնարավորություն գոյություն ունի»,- ասաց վարչապետը: Իվանիշվիլին խոսքերով՝ իր ծրագիրը կյանքում է նրանում, որպեսզի Վրաստանն ամենաբարձր մակարդակով մաքրել կոռուպցիայից, ստեղծել արժանավայել դպրոցներ, հիվանդանոցներ և ճանապարհներ, ինչպես նաև ամեն ինչ անել արտասահմանյան ներդրողներին և զբոսաշրջիկներին հրապուրելու համար: Ընդամենը վարչապետը հավելեց, որ, իր այդ ծրագրի իրականացման համար կպահանջվի շուրջ 20 տարի: Միաժամանակ, Բիծինա Իվանիշվիլին խոստացավ ոչնչացնել Սասկաշվիլու «սեւ արկղերը», մասնավորապես, ապօրինի հեռախոսալուծումների ծայնագրություններն ու տեսագրությունները: «Քաղաքականապես դա իմ ցանկությունն է... Սակայն օրենքի գերակայությունը վերաբերում է բոլորին»,- հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին: Հիշեցնենք, որ Բիծինա Իվանիշվիլին Վրաստանի վարչապետի պաշտոնը զբաղեցրել է 2012 թվականի հոկտեմբերին՝ հաղթելով խորհրդարանական ընտրություններում:

Իվանիշվիլին նշեց, որ ապագայում մտադիր է զբաղվել գործունեությամբ ոչ կառավարական հատվածում: Իվանիշվիլին խոսքերով՝ նա ցանկանում է Վրաստանը վերածել «սոփիստիկ եվրոպական» հասարակության և բիզնես կենտրոնի՝ Դուբայի նման, որը կդառնա եվրո-

ԿՈՒԼԻՑԻԱՆ ԿԿԱՏԱՐԻ ՀԱՍԱՐԱՎՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին խոստանում է, որ կուպիցիան կկատարի հասարակության առջև ստանձնած պարտավորությունները: Սույն հայտարարությունը օրենսդիր մարմնի ղեկավարն արեց՝ մեկնաբանելով նախագահական ընտրություններից հետո քաղաքականությունից հեռանալու մասին վարչապետ Բիծինա Իվանիշվիլու հայտարարությունը: Ի պատասխան, վարչապետի հեռանալը կհանգեցնի՞ արդյոք կուպիցիայի փլուզման հարցին, Դավիթ Ուսուփաշվիլին հայտարարեց. «Կուպիցիան կկատարվի» (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆԱԽԱԳԱՅՎԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԲՈԼՈՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ԿՈՒՆԵՆԱՆ ԻՐԱՎԱՅԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ԵՎ ՄԵՆՔ ԴՐԱՆ ԿՐԱՍՆԵՆՔ»

Այդ մասին հայտարարեց Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին՝ «Աճարա» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում: «Այդ հարցերի նկատմամբ հետաքրքրությունն ինչպես իմ, այնպես էլ հասարակության կողմից, մեծ է: Ես առօրյա կարգով դրան կհետեւեմ, որպեսզի Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ կառավարական ռեսուրսները չօգտագործվեն հօգուտ որեւէ թեկնածուի: Եվ որպեսզի ոչ մեկի մոտ կասկածներ չծագեն, բնականաբար, այդ առումով ուշադրության կենտրոնում կլինի կուպիցիայից նախագահության թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլին: Դա ինձ համար սկզբունքային նշանակություն ունի, քանի որ՝ ինչպես եվրոպացիները, այնպես էլ մեր հասարակությունն ու ամերիկացիները մեծ ուշադրությամբ են հետեւում դրան: Բոլոր թեկնածուներին մենք ապահովելու ենք իրավահավասար պայմաններ և իրավունքներ, և մենք դա կարող ենք անել»,- հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին: Խոսելով երկրում ծավալվող

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ՝ ՕՍԲՈՒԴՄՄԵՆԻ ՀԱՆՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ

Վրաստանի խորհրդարանը 81 պատգամավորի աջակցությամբ ընդունեց որոշում ժողովրդական պաշտպանի 2012 թվականի հաշվետվության կապակցությամբ: Որոշման նախագիծը մշակել էր մարդու իրավունքների կոմիտեն:

Խորհրդարանի որոշմամբ կոնկրետ հանձնարարականներ է տրվում նախարարություններին, ինքնակառավարման մարմիններին և գլխավոր դատախազությանը: Խորհրդարանը դիմում է նաև կառավարությանը՝ վերանայելու հանձնարարականների կատարումը վերահսկելու կոչով: Միաժամանակ, պետության կողմից սեփականության իրավունքների խախտման և անօրինական փաստերի կապակցությամբ, խորհրդարանը չի բացառում քննչական հանձնաժողովի կազմավորման հնարավորությունը: Վրաստանի ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլին որոշումը անվանվեց անմախքնաբան: «Դա լավ նախադեպ է և լուրջ ազդակ մեզ համար: Հիմա գլխավորը տրված հանձնարարականների կատարումն է»,- հայտարարեց ժողովրդական պաշտպանը:



ԱՅՑ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎ՝ ՅԱՐՈՍԼԱՎ ԿԱԶԻՆՍԿՈՒՆ



Վրաստանի նախագահ Միխեիլ Սասկաշվիլին Սուրբ Գիորգիի շքանշանով պարգևատրեց Լեհաստանի նախկին վարչապետ, «Իրավունք և արդարություն» քաղաքական կուսակցության նախագահ Յարոսլավ Կաչինսկուն:

Մինչև պարգևատրման արարողությունը, Վրաստանի նախագահի նստավայրում կայացած հանդիպմանը կողմերն անդրադարձ կատարեցին երկկողմ հարաբերությունների խորացման, եվրատլանտյան դաշինքին Վրաստանի անդամակցության հետ կապված հարցերին: Միխեիլ Սասկաշվիլին և Յարոսլավ Կաչինսկին ծաղկեպսակ դրեցին Թբիլիսիում Լեհաստանի նախկին նախագահ, Յարոսլավ Կաչինսկու ավագ եղբայր՝ Լեհ Կաչինսկու Կիսանդրին:

ՈԼՈՐՏ

ՇԱԼՎԱ ՓԻՓԻԱ. «ՕՐԵՆՔԸ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԱՆՊԱՄԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԶԻ ՊԱՐՏԱԳՐԻ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի խորհրդարանը հավանություն տվեց կոոպերատիվների մասին օրինականագծին: Դրանից հետո մեկնարկելու է գյուղատնտեսության ոլորտի բարեփոխման երկրորդ փուլը, որը նախատեսում է գյուղացիներին և ֆերմերներին տեղեկատվության հաղորդում և կոոպերատիվներում նրանց միավորման նախապատրաստում:

Վերոնշյալ օրինագծի կապակցությամբ մենք դիմեցինք Վրաստանի գյուղատնտեսության նախարար Շալվա Փիփիային և Վրաստանի խորհրդարանի ագրարային կոմիտեի փոխնախագահ Գիզա Ազուլաշվիլուն: - Բատոն Շալվա, օգոստոսի մեկին ավարտվեց սակավահող ֆերմերների աջակցության ծրագիրը: Չեղ կարծիքով, հաջորդ տարի ֆերմերներին գյուղատնտեսական քարտերի հանձնման ծրագիրը կվերսկսվի՞, թե՞ ոչ: - Բնականաբար, ծրագիրը կշարունակվի: Նախկինում այդ հարցով ոչ մի վիճակագրություն չէր տարվում, այդ պատճառով քարտերի հանձնման համար ցուցակների նախապատրաստման գործընթացն անցկացվեց բացթողումներով, ցուցակում բացակայում էին մի շարք գյուղեր: Առաջիկայում մեկնարկային ավելի լավ վիճակի մեջ կլինենք, քանզի արդեն գրեթե լիարժեք տեղեկատվություն ունենք ինչպես ոլորտի վիճակի, այնպես էլ՝ ոլորտում զբաղված մարդկանց, փոքր և միջին ֆերմերների մասին: Էլ չեմ խոսում գյուղատնտեսական խոշոր միավորումների մասին: Չեմ բացառում, որ առաջիկայում ծրագրի ձեռնարկը կարող է փոխվել, թեպետ, ընդհանուր առմամբ, ծրագիրը կնման ուժի մեջ: Բնականաբար, տվյալ պահին դժվար է խոսել ծրագրում իրականացվելիք փոփոխությունների մասին, թեպետ ելնելով նրանից, որ մեր տնօրինության տակ ավելի ստույգ ու սպառիչ տեղեկատվություն ունենք, ուստիև հաջորդ ծրագրում (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԲԱՐԱՔԱԿԱՆ ԽԱՂ

ԿՈՒԼԻՑԻԱՆ ԴԱՎԻԹԱՇՎԻԼԻՆ ՀԵՌԱՅԱՎ ԿՈՒԼԻՑԻԱՅԻՑ

«Ժողովրդի կուսակցության» լիդեր Կոբա Դավիթաշվիլին լքեց խորհրդարանական մեծամասնության, «Վրացական երազանք» կուպիցիայի շարքերը:



Հատուկ հրավիրված մամուլի ասուլիսում Կոբա Դավիթաշվիլին հայտարարեց, որ իր կուսակցությունը տեղ կզբաղեցնի վրաց ընդդիմության ձախ թելում: «Իմ գլխավոր նպատակը կոնստրուկտիվ ընդդիմախոսության համար խորհրդարանական ամբիոնի օգտագործումն է: Իսկ ամենագլխավոր նպատակը նախագահական ընտրություններին մասնակցելն է»,- հայտարարեց Դավիթաշվիլին: Փաստորեն իրավիճակը կրկնվում է: Դեռևս 2003 թվականին Կոբա Դավիթաշվիլին հանդես էր գալիս որպես Միխեիլ Սասկաշվիլու ամենաեռանդուն կողմնակիցը, թեպետ «Միասնական ազգային շարժման» իշխանության գալուց հետո, երբ նորակազմ նախարարությունում չստացավ իր ցանկալի պաշտոնը, հեռացավ և զբաղեցրեց Միխեիլ Սասկաշվիլու քաղաքականության ամենաեռանդուն քննադատի դիրքը:

